ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍԱՄ-ՍՈՒՐ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/30 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Հագուստի կախիչ՝ կահույքի չափերն են 2040մմx1000մմx250մմ: Կահույքը իրենից ներկայացնում է հագուստի համար կախիչ՝ 9 տեղանոց, մետաղական կախիչներով, պատից ամրացվող: Այն պետք է պատրաստված լինի 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից, եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրակալերով (PVC): Կախիչը պետք է բաղկացած լինի ուղղահայաց և հորիզոնական լամինացված ՓՏՍ-ներից, որոնք պետք է ունենան համապատասխանաբար 1000x120x18մմ և 2040x120x18մմ չափեր /տես գծագիր էջ-1/: Կախիչը գլխավերևում պետք է ունենա հորիզոնական դարակ, որը պետք է պատրաստված լինի 2040x250x18մմ չափի լամինացված ՓՏՍ-ից: Հորիզոնական դարակի տակ անհրաժեշտ է նախատեսել առնվազն 3 դարակակիր՝ ամրության ապահովման համար: Մետաղական կախիչների միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 240մմ: Կախիչն իր գունային երանգներով պետք է համապատասխանի դպրոցի դասասենյակների գույքին: Կախիչի համար օգտագործվող նյութերը պետք է լինեն էկոլոգիապես մաքուր: Կախիչի բոլոր մասերի միացումները պետք է իրականացվեն երաշխավորված, թաքնված ձգանների միջոցով և առնվազն ապահովեն կից գծագրում ներկայացված /տես գծագիր էջ-2/ հատվածքի չափերի ամրությունը: Նմուշը /նկար 2/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և/կամ հավաքումը իրականացվում է Մատակարարի կողմից իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Մատակարարը պարտավոր է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ

	փոխարինել նորով: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նմուշ նկարը տրվում է զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չի կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО САМ-СУР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/30 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	